ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Պ. ՇՄԱՎՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

Մարտի 5-ին, երեքշաբթի օր, առավոտյան ժամը 12-ին, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Երևանում, Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության շենքում այցելություն տվեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ պ. Շմավոն Առուշանյանին:

Ընդունելությանը ներկա էին Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահ պ. Սիմակ Սահակյանը և Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պ. Հրաչյա Գրիգորյանը:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը արժանացավ ջերմ ընդունելության:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը Իր սրտագին ողջույնի խոսքն ուղղեց Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ պ. Շ. Առուշանյանին, միաժամանակ բարգմանը հանդիսանալով Սիյուռքի հայության հայրենասիրական ջերմ զգացմունքների և երախտագիտության:

Ապա Վեհափառ Հայրապետը սիրալիր զրույց ունեցավ պ. Նախագահի հետ Մայր Աթոռում կատարվելիք շինարարական աշխատանքների կազմակերպման և Եկեղեցու գործունեության հետ կապված այլ հարցերի շուրջը:

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը, խորապես զգացված այս ջերմ ընդունելությունից, հրաժեշտ առավ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ պ. Շմավոն Առուշանյանից, օրհնելով հայ ժողովրդին և Հայրենի հարազատ կառավարությանը: